ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորաբակ գյուղի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝հաստատության դասվարի /42 դասաժամ/թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1.Դիմում/Ձև 1/,մեկ լուսանկար 3*4 չափի,

2.Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ/,

2.Անձը հաստատող փաստաթուղթ,

3.<<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը/առկայության դեպքում/,

4.Ինքնակենսագրություն,

5,Այլ պետությունների քաղաքացիները՝ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

6. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝նաև զինվորական գրքույկ,

7. Հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ/առկայության դեպքում/,

8.Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են 2025թ. օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 10-ը ներառյալ,ամեն օր՝ ժամը 10,00-ից մինչև 15,00-ն,բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝տոնական և հիշատակի օրերից, Նորաբակ գյուղի միջնակարգ դպրոցի շենքում:Մրցույթը տեղի կունենա 2025թ. սեպտեմբերի 15 -ին՝ ժամը 15,00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորաբակ գյուղի միջնակարգ դպրոցում,հասցեն՝ գ.Նորաբակ: Տեղեկությունների համար զանգահարել 077454002 հեռախոսահամարով, էլ հասցե՝ norabak@schools.am.